Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Անահիտ Ավանեսյան, ՀՀ առողջապահության նախարար

2. Գործուղման վայրը և ժամկետները

Հնդկաստանի Հանրապետություն, Նյու Դելի

2023թ. ապրիլի 25-29-ը,

3. Հրավիրող կողմը

Հնդկաստանի Հանրապետության առողջապահության և ընտանեկան բարեկեցության նախարարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Այցի նպատակն էր մասնակցել թվով 6-րդ «Հնդկաստանի առողջապահության գերազանցություն 2023թ.» (Advantage Healthcare India 2023) գագաթնաժողովին, ամրապնդել բնակչության առողջության պահպանման և դեղերի արդյունաբերության ոլորտներում Հնդկաստանի Հանրապետության հետ փոխշահավետ համագործակցությունը, երկկողմ և բազմակող հանդիպումներ ունենալալ երկրների բարձրաստիճան պաշտոնյաների, որոշում կայացնողների, ոլորտի շահագրգիռ կողմերի հետ և քննարկել առողջապահության բնագավառում համագործակցության և մասնագիտական փորձի փոխանակման նոր հնարավորությունները:

5. Քննարկված թեմաները

Միջոցառման շրջանակներում քննարկվեցին բժշկության և ընդհանուր առողջապահության ոլորտում առկա գլոբալ հիմնահարցերը, վերջիններիս հաղթահարման ընդհանուր մոտեցումները, Հնդկաստանի և այլ երկրների միջև

համագործակցության խթանման, ինչպես նաև որակյալ առողջապահական ծառայությունների արտահանման հեռանկարները: Գագաթնաժողովի հիմնական թեմաներից էին համաճարակի ֆոնին բժշկական զբոսաշրջության վերականգնումը, առողջապահության ոլորտի մասնագետների համաշխարհային պակասի հաղթահարումը, միջազգային գիտական աստիճանների ճանաչման ոլորտում համագործակցության խորացումը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գագաթնաժողովի շրջանակներում կազմակեռպվել էին համաժողովներ, տարածաշրջանային ֆորումներ և ցուցահանդեսներ, որոց մասնակցել են Հայաստանի պատվիրակության անդամները: Իրականացվել են երկկողմ և բազմակողմ պաշտոնական հանդիպումներ: Նախագահել եմ գագաթնաժողովի «Կենտրոնանալով գործընկերության և համագործակցության վրա» խորագրով առաջին նստաշրջանը և հանդես եմ եկել ելույթով՝ «Համագործակցություն հանուն ավելի առողջ վաղվա օրվա համար՝ կառավարության միջոցով (ԱՊՀ տարածաշրջան)» խորագրով կլոր սեղան-քննարկման ժամանակ:

Հանդիպել եմ Հնդկաստանի Հանրապետության առողջապահության և ընտանիքի բարեկեցության նախարարի հետ, քննարկել ենք երկու երկրների առողջապահական համակարգերի գործակցությանը վերաբերող հիմնահարցերը, դեղագործության, բժշկական օգնության և մասնագետների փորձի փոխանակման բնագավառում համագործակցության հեռանկարները: Հանդիպել եմ Հնդկաստանի բժշկական հաստատությունների ամենամեծ ցանցի՝ Ապոլլոյի ղեկավար անձնակազմի հետ և քննարկել երկրների բժշկական հաստատությունների միջև համագործակցության ու մասնագիտական փորձի փոխանակման հնարավորությունները:

Այցի ընթացքում պատվիրակությունը այցելել է «METRO» հիվանդանոցային համալիր: Հիվանդանոցի ղեկավար կազմի հետ հանդիպման ընթացքում անդրադարձել եմ առողջապահության ոլորտում ինտենսիվ զարգացող հայ-հնդկական հարաբերություններին և ընդգծել երկկողմ համագործակցությունը նոր ծրագրերով համալրելու կարևորությունը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպումների շրջանակներում Հնդկաստանի բժշկական հաստատությունների «Ապոլլո» ցանցի և ՀՀ ԱՆ «Սուրբ գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի, ինչպես նաև Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր:

Ձգտելով խթանել ու ամրապնդել առողջապահության ոլորտում համագործակցությունը՝ այցի շրջանակում կնքվել է փոխըմբռնման հուշագիր Հնդկաստանում գործող և մեծ ճանաչում վայելող «METRO» հիվանդանոցային համալիրի և Հայաստանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի, ինչպես նաև Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի միջև:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպումների արդյունքում առաջարկվել է հետագա երկկողմ համագործակցությունը խորացնելու և զարգացնելու նպատակով ավարտել ընթացքի մեջ գտնվող երկու համաձայնագրերի՝ դեղերի կարգավորման բնագավառում համագործակցության մասին հուշագրի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ու Հնդկաստանի Հանրապետության առողջապահության և ընտանեկան բարեկեցության նախարարության միջև հանրային առողջապահության և բժշկագիտության ոլորտներում համագործակցության մասին համաձայնագրի ստորագրման գործընթացը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ընթացք տալ Հնդկաստանի «Ապոլլո» հիվանդանոցային ցանցի, «METRO» հիվանդանոցային համալիրի և Հայաստանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի ու Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի միջև կնքված հուշագրերով ամրագրված կետերի իրականացմանը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

04.05.2023

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

2023 թ. մայիսի 4

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը	ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը	N 420-Ա 17.04.2023թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պարտադիրությունը գործուղելու դեպքում*)	Նախարար Անահիտ Ավանեսյան
4. Գործուղման վայրը	Հնդկաստանի Հանրապետություն ք. Նյու Դելի
5. Գործուղման ժամկետները	2023թ.ապրիլի 25-29-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ 1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*) 2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)	Ճանապարհածախս, գիշերավարձ և օրապահիկ

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման կարգերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անուն, ազգանուն 1*	*Անուն, ազգանուն 2*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)			
	Ավիատոմսի արժեքը (դրամ)			
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)			
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)			
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (նկարագրել)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)				

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը _____ (ստորագրություն) 04.05.2023թ.